

ՎԵՐԱՕԾՎԵՑ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

«Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր
վաստակին շինողք նորա:
Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք,
ընդունայն տքնին պահապանք նորա»:
(ՍԱՂՄ. ՃԻՁ I)

«Նոր Գյումրի 2003» փառատոնը համընկավ մի արարողության հետ, որին երկար էր սպասել գյումրեցին: Տարիների տևական ընդմիջումից հետո վերաօծվելու էր Սուրբ Նշան եկեղեցին՝ իր դռները հյուրընկալորեն բացելով բարեպաշտ ու հավատավոր գյումրեցու առջև:

Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցու շինությունն սկսվել է 1852-ին և ավարտվել 1864-ին: Ինչպես տեղեկացնում է հյուսիսային դռան վրայի արձանագրությունը, եկեղեցին կառուցվել է իշխան Երկայնաբազուկ Արղությանցի և քաղաքի բնակչության օժանդակությամբ. «Առատաբաշխ տրօք Պայծառափայլ կնյազ Ղահրամանի Երկայնաբազուկ Արղութեանց և ջերմեռանդ հասարակութեանն Հայոց քաղաքիս կառուցաւ Ս. Աստուածածին եկեղեցիս սկսեալ ի 1852 ամի Փրկչին և աւարտեալ 1864 ամի»: Եկեղեցին արձանագրության մեջ հիշատակվում է Ս. Աստվածածին անվամբ, այլ ոչ թե Ս. Նշան, քանի որ այս վերջինիս շինության ժամանակ Աստվածածին ավագ եկեղեցին նորոգված չէր, և Ս. Ցոթվիրաց պատկերը մտադիր էին այստեղ բերել: Օծման ժամանակ արդեն,1870 թվականին, սկսվել էր Աստվածածնի նորոգությունը, ուստի այն օծեցին Ս. Նշան անվամբ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Եկեղեցին խաչաձև է: Չորս միջնասյուների վրա, կամարներից վերև, երկինք է խոյանում հրաշակերտ, սրածայր կաթողիկեն՝ վրան խաչը: Գմբեթն ընդհանրապես ունի տասներկու նեղ ու երկար լուսամուտներ: Ս. Նշանը զարդարված էր փայտից քանդակված ողկույզներ ունեցող խաչկալով: Բեմի աջ ու ձախ կողմերում կան երկու խորաններ. առաջինը՝ պատարագչին սպասավորելու, իսկ երկրորդը՝ խաչելության ու սրբոց պատկերների համար: Այստեղ ամեն երեկո լեցուն էր լինում ջերմեռանդ աղոթողների բազմությամբ:

ԿԱՐՈՒՄԱՅՈՒ Ս. ԴԻՈՆԻՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ

ՎԵՐԱՕԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՔԱՀՈՑՈՒՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Академия наук Армянской ССР
Филиал литературы и искусства

ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՎՈՒՄ Է Ս. ՄԵՂԱՆԸ

Եկեղեցու արևմտյան կողմում է գտնվում զանգակատունը կամ ժամատունը, որի վրա բարձրանում է գեղեցկաշեն կաթողիկեն՝ ութ սյուներով և Ս. Խաչով:

Եկեղեցին ունի երեք դուռ՝ հարավային, արևմտյան և հյուսիսային: Հարավային դռան վրա, մարմարյա քարին քանդակված է Ս. Աստվածածինը: Այս դռան հանդեպ է գտնվել Սահակ-Անուշյան օրիորդաց ուսումնարանը:

Արևմտյան ճակատին, դռան աջ և ձախ կողմերում, կան երկու նեղ, երկար լուսամուտներ, ինչպես նաև երկու կլորավուն լուսամուտներ՝ դրանցից բարձր:

Հյուսիսային կողմում կան երեք մեծ լուսամուտներ, իսկ դռան աջ ու ձախ կողմերում են գտնվում ևս երկուսը, որոնք նեղ են ու երկարավուն: Սրանցից ավելի բարձր կան երեք կամարատեսք պատուհաններ: Նույնն է նաև հարավային պատակողմը:

Արևելյան կողմում է մեծ լուսամուտը՝ սեղանը լուսավորելու համար, և երկու փոքրերը՝ խորանների համար: Թվարկվածներից բարձր են տեղավորված մեկական կամարակապ լուսամուտներ: Գետնահավասար երկու փոքրիկ պատուհանները լուսավորում են եկեղեցու ներքնատունը: Հյուսիսային, հարավային և արևելյան պատերի մեջտեղում բարձրանում են սև քարից ոլորածո դուրս փորված գեղեցիկ խաչեր:

Այսքանը եկեղեցու կառուցման պատմությունից: Իսկ այսօր, ինչպես երկու դար առաջ, ցնծություն է ապրում հավատավոր գյումրեցին, քանզի երկրաշարժից խոնարհված աղոթատունն այս անգամ ևս վեր է հառնում իր հավատավոր զավակների աջակցությամբ, թեև ոչ Արղությանց, այլ՝ Ղուկասյան:

ՔԱՂԱՔԻ ՄՈՒՏՔԻ ՄՈՏ

Սեպտեմբերիի 27-ին, առավոտյան ժամը 9.45-ին, Գյումրիի մուտքին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությանը դիմավորեցին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, Շիրակի մարզպետ Ռոմիկ Մանուկյանը, քաղաքապետ Վարդան Ղուկասյանը, մարզային ու տեղական իշխանությունների այլ ներկայացուցիչներ և առաջնորդեցին դեպի վերանորոգյալ Ս. Նշան եկեղեցի:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ և թանգարանների վարիչ-տնօրեն Տ. Փառեն եպս. Ավետիքյանը և Մայր Աթոռի միաբաններ:

ՄՈՒՏՔ «ՀՐԱՇԱՓԱՌ»-ՈՎ

Այստեղ պատվարժան հյուրերին դիմավորեցին թեմի հոգևորականաց դասը և մեծաթիվ հավատացյալներ ոչ միայն Գյումրիից, այլև մարզի այլ բնակավայրերից ու Հայաստան աշխարհի տարբեր շրջաններից:

Հանդիսավոր թափորով Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ի երգեցողությամբ առաջնորդվեց եկեղեցի, ուր քիչ հետո պետք է կատարվեր Ս. Խորանի և Ս. Սեղանի հանդիսավոր օծումը Սրբալույս Մյուռոնով՝ ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, մասնակցությամբ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի և Տ. Փառեն եպս. Ավետիքյանի:

ՄԵԿ ՕՐ ԱՌԱՋ...

Սեպտեմբերի 26-ի երեկոյան դարձյալ մարդաշատ էր Ս. Նշան եկեղեցու բակը: Հավատավոր գյումրեցիների ներկայությամբ առաջնորդ Սրբազանը քահանայից դասի հետ կատարեց եկեղեցու լվացման և օծման արարողությունը՝ հաջորդ օրվան թողնելով Խորանի և Մեղանի օծումը:

Ս. Նշան եկեղեցին փակվելով 1930-ական թվականներին՝ հետագայում դարձվեց պահեստ, թատրոն, ասպղադիտարան և կանգուն պատերով մաքառեց մինչև 1988-ի ահեղ երկրաշարժը: Սակայն Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանի և իր եղբայրների աջակցությամբ վերանորոգվեց, բարեզարդվեց և այսօր պատրաստվում է դռնբաց դիմավորել հավատացյալ ու ավանդապահ գյումրեցուն:

ԼՎԱՑՈՒՄ ԵՎ ՕԾՈՒՄ

Ս. Ցոթվերք առաջնորդանիստ Մայր եկեղեցում կատարած երեկոյան ժամերգությունից հետո, Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի հանդիսապետությամբ, եկեղեցականաց դասը, հանդիսավոր թափորով ու «Հրաշափառ»-ի երգեցողությամբ առաջնորդվեց դեպի Ս. Նշան եկեղեցի:

«Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ հանդիսավոր թափորն առաջնորդվեց դեպի եկեղեցու դուռը: Հենց մուտքի մոտ, դրսի կողմից, համաձայն «Մաշտոց» ծիսարանի, ընթերցվեցին Սուրբգրային համապատասխան հատվածներ:

Դռան մոտ Սրբազան Հայրը, հոգևորականաց դասը, ինչպես նաև ներկա մեծաթիվ հավատացյալներ, ծնրադիր, Տիրոջից հայցեցին. «Բաց մեզ Տէր, զդուռն ողորմութեան...»:

«Բաց մեզ Տէր» շարականի երգեցողությունից հետո, Տիրոջ ողորմածությամբ բացված դռնից ներս մտան բոլոր ներկաները: Սկսվեց եկեղեցու լվացումը՝ համաձայն նախնյաց սրբազան ծեսի: Ըստ այդմ լվացվեց ողջ աղոթատունը նախ սովորական ջրով, ապա՝ գինով, որից հետո հանդիսավորաբար կատարվեց օծումը: Սուրբգրային ընթերցվածներով, սաղմոսասացությամբ և շարականների երգեցողությամբ, ձեռամբ առաջնորդ Սրբազանի, Սրբալույս Մյուռոնով համապատասխանաբար օծվեցին եկեղեցու չորս անկյունները, չորս ավետարանիչների, տասներկու առաքյալների և մեր հավատո հայր ու առաջին Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի անունները կրող սյուները, դռները, մկրտության ավազանը՝ Մեղանը և Խորանը թողնելով հաջորդ օրվան:

Հավարտ օծման Միքայել Սրբազանը, անդրադառնալով օրվա խորհրդին, նախ շնորհավորեց ներկաներին, ապա խոսքն ուղղելով հավաքվածներին ասաց. «Սիրելինե՛ր, իրապես անքննելի են Աստծու գործերը: Իմ այս մեղավոր ձեռքերով ես օծեցի տաճարի սյուները և մկրտության ավազանը:

Երբ մեկ տարի առաջ օծվեց Ս. Հակոբ եկեղեցին, ես այսչափ հուզում չապրեցի, որովհետև Սուրբ Նշանն այն եկեղեցին է, որի խորհրդավոր պատերի տակ մեծացանք ես և իմ ընկերը: Տարիներ հետո մեզանից մեկը վերաշինելու էր խոնարհված եկեղեցին, իսկ մյուսը՝ վերաօծելու...

...Վաղը շարունակվելու և բուն օծումը կատարվելու է ձեռամբ ազգիս Վեհափառ Հայրապետի, և այս արարողությանը ձեր ներկայությունն եք բերելու նաև դուք՝ այստեղ հավաքվածներդ»:

Առաջնորդ Սրբազանը խորին շնորհակալություն հայտնեց քաղաքապետ Վարդան Ղուկասյանին՝ նորոգության ասպվածահաճո գործը բարեհաջող ավարտի հասցնելու համար: Ապա հրավիրեց հավատավոր գյումրեցիներին՝ հաջորդ օրը ևս ներկա գտնվել վերաօծման հանդիսավոր արարողությանը:

ՁԵՌԱՄԲ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԱՏԱՐՎԱԾ ՕԾՈՒՄԸ

Սեպտեմբերի 27-ին ցնծություն էր ապրում ավանդապահ գյումրեցին: Թեմի առաջնորդի գլխավորությամբ մարզային, տեղական իշխանությունների ղեկավարները, հոգևորականաց դասը և հավատացյալների խուռներամ բազմությունը խանդավառությամբ ու անհուն բերկրանքով էին դիմավորում Հայոց Հայրապետին և Նորին Սրբությանն ուղեկցող հոգևորականներին: Նրանց էր միացել նաև ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորած կառավարական պատվիրակությունը, արտերկրից ժամանած հյուրեր, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ:

Հանդիսավոր թափորը «Հրաշափառ»-ով Ս. Նշանի գավթից առաջնորդվեց դեպի Խորան: Ժամը 10.00-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի, սկըսվեց Խորանի և Սեղանի լվացումն ու օծումը: Նորին Սրբությանն օգնում էին Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը և Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

«Պահպանիչ» աղոթքից հետո Նորին Սուրբ Օծությունը լուսաճառագ Ս. Սեղանից ներկաներին ուղղեց իր հայրապետական պատգամ-հորդորը, գնահատանքի ու շնորհավորանքի ջերմ խոսքը՝ ի մասնավորի շեշտելով.

«Սիրելի՛ բարեպաշտ գյումրեցի հավատացյալներ, սիրելի՛ ներկայացուցիչներ տեղական, մարզային իշխանությունների, շատ հարգարժան և պատվարժան հյուրեր.

Գոհաբանություն ենք ուղղում մեր սրբերին, փառք ենք տալիս առ Աստված, որ Տերն արժանի դարձրեց մեզ՝ այսօր տեսնել հայոց անկախ պետականությունը և մեր ազատ լինելության խորհրդանիշ վերաօծվող եկեղեցիները: Թոթափած անցած տարիների ծանր լուծը՝ այսօր մենք հնարավորություն ունենք խոնարհված եկեղեցիները վերստին վեր խոյացնել, նաև կառուցել նորերը, որպեսզի հավատավոր ժողովուրդը կարողանա աղոթքի այդ տաճարներում իր սրտի խոսքն ուղղել առ Աստված:

Այսօր գոհություն և փառք ենք բարձրացանում առ Աստված, որ վերստին շենանում ու պայծառանում է Գյումրի քաղաքը, որ վերստին ուրախությունն է վերադառնում ձեր օջախներից ներս, սիրելի՛ գյումրեցիներ:

Վերստին Աստծու ողորմության և հույսի դռներն են բացվել Հայոց աշխարհի և մանավանդ Շիրակ աշխարհի և նրա բարեպաշտ ժողովրդի առջև, քանզի օրավուր վերանում են հեպքերն ավերիչ երկրաշարժի, որն այնքան ցավ, տրտմություն և սուգ բերեց ձեզ և մեր ժողովրդին:... Այսօր վերանորոգված, գեղեցկազարդ և պայծառաշուք է նաև Ս. Նշան եկեղեցին:

Ի նշանավորումն այսօրվա տոնական խնդության՝ Տերը մեզ արժանի է դարձնում Ս. Նշան եկեղեցու օծումը կատարելու ուրախությունն ապրել: Եկեղեցի, որի դռները հարկադրաբար փասնամյակներ շարունակ փակված էին հավատացյալ ժողովրդի առջև: Այսօր այն վերաօծված է, և մենք երախտապարտ ենք հավատավոր հայորդի Գյումրիի քաղաքապետ տիար Վարդան Ղուկասյանին, ում ջանքերի շնորհիվ իրականացավ այս երազանքը:

Մեր մաղթանքն է և հորդորը ձեզ, սիրելի՛ գյումրեցիներ, որպեսզի ձեր հավատարմությունը մեր հայրերի սրբազան հավատքին անսասան պահեք, շեն ու պայծառ պահեք ձեր եկեղեցիները, հավատքով ու աղոթքով թրծեք նրանց որմերը և քարերը, որպեսզի ոչ մի կործանարար աղետ չկարողանա շարժել նրանց հիմերը, որպեսզի երբեք մեր ժողովրդի զավակներն իրենց հավատքի օջախները խոնարհված չտեսնեն:

Մենք եկել են միասին՝ հանրապետության պետական այրերի, տիար Անդրանիկ Մարգարյանի հետ, ուրախակից լինելու ձեզ: Եկել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ բերելով մեր օրհնությունը, սիրելի՛ գյումրեցիներ և Շիրակի մարզի հավատացյալներ, որպեսզի այս օրհնության ներքո ապրեք խաղաղության և ցնծության մեջ:

Եկել ենք նաև մեր գնահատանքի խոսքը բերելու Շիրակի թեմի հոգևոր սպասավորներին՝ ի գլուխ հոգևոր առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ինչպես նաև իրենից առաջ այս թեմում ծառայություն մատուցած նախկին առաջնորդներին, որոնք ուղեկից են մեզ այսօր և ուրախակից մեր ցնծությանն ու բերկրանքին: Նրանց ճանաչում եք դուք. Ուկրաինայի հայոց թեմի ներկայիս առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր կարևոր ծառայությունը մատուցող Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: Սիրելինե՛ր, մեր հոգիները, մեր աղոթքը միահյուսած՝ խնդրենք, որ Տերը մեզ խաղաղություն պարգևի:

Մենք եկել ենք մեր գնահատանքի խոսքն ուղղելու ձեզ, որ հավատքի և լավատեսության անսասան ոգով, համբերությամբ ու արիությամբ հաղթանակի վերածեցիք ձեզ բաժին ընկած փորձությունները:

Շնորհը և ողորմությունը թող ուղեկից լինեն մեզ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Խոսքի վերջում իր գնահատանքը հայտնելով թեմական առաջնորդին և բարերարներին՝ Ամենայն Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ հետայսու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու այս և հավատքի մյուս տները լի պետք է լինեն աղոթող հավատացյալներով:

Գնահատանքի խոսքերից հետո Նորին Սրբությունը նորաօծ եկեղեցուն նվիրեց Ս. Հաղորդության սկիհ, որպեսզի մշտապես տաճար այցելող հավատացյալը Տիրոջ Մարմնին ու Արյանը հաղորդ դառնա շնորհիվ հենց Ս. Էջմիածնից բերված սկիհից բաշխվող նշխարի:

ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Օծման հանդիսավոր արարողությունից անմիջապես հետո, ժամը 11.00-ին, սրբագործված տաճարում մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագը: Օրվա պատարագիչն էր Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը: Եպիսկոպոսական հանդիսավոր Ս. Պատարագի ընթացքում նորոգ օծյալ եկեղեցում Ս. Հաղորդություն ստացան մեծաթիվ հավատացյալներ:

Հավարտ Ս. Պատարագի, Հայրապետական մաղթերգի երգեցողությամբ, հանդիսավոր թափորն Ամենայն Հայոց Վեհափառ Հորը, հոգևորականաց դասի և բարձրաստիճան հյուրերի հետ, առաջնորդեց եկեղեցու բակ, ուր տեղի ունեցավ մատաղօրհնություն, իսկ ժողովրդական տոնախմբությունը շարունակվեց օրվա ընթացքում:

Նորին Սուրբ Օծությանն ուղեկցում էին Շիրակի թեմի նախորդ երկու առաջնորդները՝ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը և Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ և թանգարանների վարիչ-տնօրեն Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, ինչպես նաև գավազանակիր Տ. Գեղարդ աբեղա Վահունին և Մայր Աթոռի միաբան Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը:

Ս. Պատարագին ներկա էին նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի գլխավորած կառավարական պատվիրակությունը, Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Օրդուեյը, Հայաստանում հավատարմագրված պետական, դիվանագիտական բարձրաստիճան պաշտոնյաներ, մարզային, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, մեծաթիվ հրավիրյալներ Հայաստանի տարբեր շրջաններից:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու